



## ՀԱՆԳԻՍ

**ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՍ Ս. ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ**

**ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ**

**ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ**

**(1990-2012)**

Սրբոց Յակոբեանց վշտակիր Միաբանությունը սրտի կսկիծով կը գուժէ մահը իր սիրեցեալ հօր եւ պետին՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Մանուկեանին, որ ի Տէր հանգեաւ Ուրբաթ, 12 Հոկտեմբեր, 2012, առաւօտեան ժամը 9:30-ին:

Հայոց Յեղասպանութեան օրերուն, հայկական Վան նա-հանգէն տեղահանուած ծնողաց զաւակ՝ Աւետիս, կը ծնի Իրաքի անապատի աւազներուն վրայ 1919-ին, առաջին օրէն իսկ համտեսելով կեանքի կիզիչ դառնութիւնը: Բայց ծնողաց ունեցած հաւատքն ու վաղուան յոյսը զինք թրծեցին նոյն հոգիով եւ եռանդով: Յետագային, ուրիշներու նման, ան եւս սիրեց Հայ գիրն ու գրականութիւնը, եւ ծառայութեան ասպարէզ ընտրեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Իր մատղաշ տարիքին, Թորգոմ Պատրիարք սնաւ եւ հասակ առաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց շնորհաբաշխ յարկին տակ եւ իր տքնաջան աշխատանքին ու նուիրեալ ոգիին շնորհիւ ան կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ 1939-ին: Տարիները ցոյց տուին, թէ ան տէր էր խօսուն եւ զգայուն սրտի մը, որ համընթաց կը քալէր իր մտքի թռիչքներուն հետ: Կը սիրէր գրել եւ խօսիլ ինչ որ լաւն էր եւ ապրեցնող: Ան նոր շունչ էր երիտասարդ սերունդին համար իր խաղաղասէր, քաջալերող եւ ոգեւորող նկարագրով:

Կրթական մարզին մեջ պահանջկոտ եւ հետապնդող էր՝ սիրով, կարգապահութեամբ եւ օրինապահութեամբ. ան գիտէր եւ կը գնահատէր ժամանակի սղութիւնը եւ լաւագոյնս կ'օգտագործէր զայն յօգուտ բոլորին: Հոգեւոյս Սրբազանը մեծապէս գնահատելի էր նաեւ իր տարած բեղուն աշխատանքով մեր եկեղեցական երաժշտութեան ուսուցման մեջ, ուր տարիներով զբաղեցաւ երկսեռ երգչախումբեր կազմելով եւ գեղեցկացնելով եկեղեցւոյ երգեցողութիւնը:

Իր քաղցր բնավորութեամբ ան կրցաւ իր վրայ հրաւիրել շատերուն միտքն ու սիրտը եւ առ այդ բարձրացաւ թեմական առաջնորդական պաշտօնին՝ զոր վարեց երկար տարիներ, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան եւ Արեւելեան թեմերուն մեջ: Պաշտօնի բերումով ան կարողացաւ նաեւ մուտք գործել միջեկեղեցական ասպարէզէն ներս, ուր գնահատելի կերպով կարողացաւ յաջա օտարներուն ներկայացնել եւ ծանօթացնել Հայ ազգն ու եկեղեցին: Իր տարած աշխատանքներուն եւ ունեցած յաջողութիւններուն համար ան սիրուեցաւ եւ գնահատուեցաւ բոլորէն:

Եկեղեցական ասպարէզին մեջ գրեթէ բոլոր ճանապարհները բաց էին իրեն համար: Երբ ներկայացաւ Աթոռին, ան արժանաւորապէս ընտրուեցաւ Պատրիարք Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռին 1990-ին, իբրեւ 96-րդ Գահակալը, որ վարեց 22 տարիներ: Իբրեւ գահակալ ան մտահոգ էր թէ ինչպէս պէտք էր պահել եւ զօրացնել Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնն ու Վանքը ի հեճուկս ժամանակին առթած դժուարութիւններուն եւ անակնկալներուն: Սրբատեղեաց անցեալի պատմութիւնը իր խառնակ, պրկուած, ռիսակալ եւ անզիջող նկարագրով ամէն վայրկեան կը խօսէր եւ կը պատկերաւորուէր Պատրիարքին մտքին ու աչքերուն առաջ: Ան կը զգար եւ կը գիտակցէր որ յատուկ քաջութիւն եւ հնարամտութիւն կը պահանջէր սրբատեղեաց վիճակը պահել անտեղիտալի եւ զօրաւոր: Բոլորին յայտնի է, թէ Երուսաղէմը իր պատմութեամբ, դժուարութիւններով եւ հմայքով եզակի է երկրագնդի վրայ: Իրապէս մեծ բախտաւորութիւն եւ մեծ պատիւ է ապրիլ եւ ծառայել Երուսաղէմի Քրիստոսակոխ վայրերուն մեջ:

Մեր սիրեցեալ Թորգոմ Պատրիարք իր կատարած աշխատանքին եւ նուիրուածութեան լումայով կարողացաւ գրաւել իր արժանի տեղը Երուսա-

ղեմի Հայ Պատրիարքության պատմության մեջ: Իր ունեցած սիրոյն, նուիրումների, աշխատասիրության եւ յաջողութիւններուն համար ան մեծապէս գնահատուեցաւ եւ պարգևատրուեցաւ ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետության Նախագահին եւ Ամենայն Հայոց Հայրապետին եւ այլ երեւելի հաստատութիւններէն:

Այսօր, ետին թողած իր գեղեցիկ վաստակը, մեզմէ յաւէտ կը բաժնուի մեր Սուրբ Աթոռին նուիրեալ Գահակալը՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Մանուկեան:

Թող իր սէրն ու ոգետրող շունչը վարակիչ հանդիսանայ իր յաջորդներուն:

Կ'աղօթենք որ Աստուած խաղաղության մէջ հանգչեցնէ մեր Պատրիարք Սրբազան Հօր տառապած հոգին:

**Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:**